ՈՒՋԱՆԻ ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԻ

ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

ՆԱԽԱԳԻԾ

ԱՐԱՐԱՏ

2023

Նախագծի ղեկավար՝ Քրիստինե Սարգսյան

Դասարան՝ 7-րդ

Առարկա՝ Հայոց պատմություն

Նախագծի անդամներ՝ Ադամյան Էլեն, Առաքելյան Նելլի, Առաքելյան Արմեն, Ավետիսյան Լուսինե, Ավետիսյան Լարա, Բալայան Սոֆի Բառբառյան Դերենիկ,, Թադեվոսյան Մանե, Թովմասյան Էլեն, Կիրակոսյան Աննա, Կիրակոսյան Աշոտ, Կիրակոսյան Կարինե, Հակոբյան Աննա, Հովհաննիսյան Մարգարիտա, Մանուկյան Դավիթ, Պետրոսյան Ռոզա

Արարատը երկրաբանական, մշակութային և պատմական փոխազդեցությունների խաչմերուկում բարձրացող գագաթ է, որը հազարամյակներ շարունակ գերել է մարդկային երևակայությունը: Այս աշխատանքը նպատակ ունի խորանալ և բացահայտել նրա դերը պատմության մեջ, այդ համատեքստում անդրադառնալով աշխարհագրական և մշակութային գործոններին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Աշխարհագրական ակնարկ.....4
2. Անվան ստուգաբանությունը և առաջին հիշատակությունները.....7
3. Արարատ լեռը և Աստվածաշունչը.....9
4. Առաջին վերելքները Արարատ լեռան վրա.....11
5. Արարատ լեռը գրականության և արվեստի մեջ.....14

Օգտագործված գրականության ցանկ.....22

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Հայկական բարձրավանդակի ամենաբարձր լեռնագագաթը, Հայոց երկրի հիմնասյունը՝ Մեծ Մասիսն է կամ Մեծ Արարատը, որի բարձրությունը ծովի մակերևույթից կազմում է 5165 մ (ըստ հին չափումների՝ 5156 մ, ըստ թուրքական չափումների՝ 5170 մ):

Իր հարաբերական բարձրությամբ Մասիսն աշխարհի երկրորդ բարձր լեռն է (4300 մ բարձրությամբ Կիլիմանջարոյից 5895մ/4877մ հետո), և գտնվում է Չինաստանից Իսպանիա ընկած աշխարհագրական տարածքի երկրաչափական կենտրոնում:

Մասիսը հանգած բազմածին հրաբխային էքստրուզիվ և մեկուսացած լեռնազանգված է Արարատյան դաշտի հարավում: Այն վեր է խոյանում 130 կմ եզրագիծ ունեցող պատվանդանի վրա՝ զբաղեցնելով 1200 կմ^2 տարածք և կազմված է կոնաձև երկու գագաթներից, որոնցից մեկը կոչվում է Մասիս (5165 մ), իսկ փոքրը՝ Սիս (3925 մ): Մեծ Մասիսը Հայկական Պարից բաժանվում է Աղտո-ձոր (Խարաբաբազարի) լեռնանցքով (1670 մ), իսկ Մեծ և Փոքր Մասիսներն իրարից անջատված են տաշտաձև մի թամբարդով (2688 մ), որը հայտնի է եղել Սարդար բուլաղի թամքոց անունով: Երկու Մասիսների գագաթների միջև եղած հեռավորությունը կազմում է 12 կմ:

Գիտական հաշվումներով Մեծ և Փոքր Մասիսներն իրարից տարանջատված են երկրաբանական մի ամբողջ դարաշրջանով: Այն դեպքում, երբ Մեծ Մասիսի երկրաբանական տարիքը կազմում է 3,5 մլն տարի, Փոքր Մասիսն ունի ընդամենը 200000 տարվա պատմություն:

Մեծ Մասիսի գագաթնային հատվածն իրենից ներկայացնում է ընդհանուր հիմքից բարձրացած և հսկա պատվանդանի վրա տեղադրված բրգաձև մի լեռ՝ 12 կմ^2, դեպի հյուսիս թեքված զառիթափ ու ժայռոտ գագաթով: Պատվանդանային մասը գմբեթաձև է, չափավոր թեք լանջերով, ալիքա-թմբավոր սարավանդներով՝ 3250-3450 մ բարձրությամբ, որոնք կտրտված են ձորակներով ու հեղեղատներով : Լեռան զառիկող լանջերը ծածկված են հողմահարված հրաբխային ապարների քարակարկառներով՝ «քարե ծովերով», իսկ գագաթը հավերժական ձյունով, որի ստորին սահմանը հասնում է մինչև 4100-4250 մ:

Մեծ Մասիսի գագաթին են գտնվում 30 սառցադաշտեր, որոնք հարավ-արևմտյան լանջին իջնում են մինչև 3850-3950 մ:

Մեծ Արարատի հյուսիսային ստորոտից, Դաշբուռն գյուղից հարավ, բխում է Արաքսի աջակողմյան վտակ Միջին Սև ջուր գետը, որին արևելյան կողմից խառնվում է Գինո գետակը՝ ոռոգելով Ակոռիի այգիներն ու դաշտերը: Ավանդության համաձայն հայոց Արտավազդ Ա (Ք.ա. 160-115թթ.), թագավորը գետնակուլ է եղել այս գետակի ակունքի մոտ:

Արարատի լանջին՝ հին Ակոռիից վերև, Գինո գետակի աջ ափին վաղ միջնադարում հիմնվել է Ս. Հակոբ անունով վանք կամ մենաստան (խաչաձև գմբեթավոր), որից ոչ հեռու բխում էր սառնորակ մի աղբյուր, որն ըստ ավանդության, գոյացել էր Ս. Հակոբի արտասուքից: Ժողովուրդն ուխտատեղի-աղբյուրն անվանում էր նաև «Անհատական» կամ «Անահտական» (հավանաբար Անահիտ դիցամոր անունով), որին վերագրվում էր ամուլ կանանց բուժելու հատկությունը: Աղբյուրի ջուրը սրսկել են նաև դաշտերին՝ բերքը մարախ միջատներից պաշտպանելու համար:

Մեծ Մասիսը հարուստ է իր բուսական և կենդանական աշխարհով: Այստեղ ալպյան բուսականությունն ավելի բարձր է, քան Կովկասյան լեռների վրա, իսկ միջին գոտու (1500-3500 մ) բուսական ծածկույթը համեմատաբար ավելի փարթամ է: Այստեղ կան լավ արոտներ և գիհու թփուտներ: Հ. Աբիխը, Ե. Վայդենբաումը և ուրիշ այցելուներ վկայում են Սարդար-բուլաղի մոտակայքում պահպանված կեչու հնագույն անտառների՝ մացառների մասին: Լեռան ստորին գոտում (1500 մ ցած), գերակշռում են կիսաանապատային աղասեր բույսերն ու չորասեր թփուտները, իսկ ճահճուտներում՝ եղեգնուտները:

Հնում Արարատը հռչակված էր որպես Հայոց արքունի որսատեղի: Տակավին 10-րդ դ. արաբ աշխարհագետ Իսթախրիի վկայությամբ Արարատն ուներ անտառներ և որսատեղիներ: Իսկ Յակուտին (13-րդ դ.) գրում է, որ Արարատի վրա են գտնվել Հայոց թագավորների շիրիմներն իրենց գանձերով:

Մեծ Մասիսի հարավ-արևելյան մասում է գտնվում Փոքր Մասիսը, որը կոչվում է Սիս: Սիսը կանոնավոր կոնաձև լեռ է՝ տեղադրված Մասիսից հարավ-արևելք, որի գագաթնային մասը (1,5 հա) ալիքավոր հարթավայր է՝ ծածկված ծառերով և

քարակույտերով: Սիսի լանջերը բավականաչափ զառիթափ են և մասնատված: Այն զուրկ է հավերժական ձյունից և սառցադաշտերից:

Սիսի ստորոտում՝ թամբարդի վրա, գտնվում էր Երևանի սարդար Հուսեին խանի պալատ-ամառանոցը՝ Սարդար-բուլաղը՝ իր սառնորակ (մոտ 6^0) աղբյուր-ավազանով:

Մասիսի վրա հնագույն ժամանակներից տեղի են ունեցել մի շարք ավերիչ և կործանարար երկրաշարժեր, որոնցից հիշատակության արժանի են 139, 1319, 1679, 1840, 1887թթ. երկրաշարժերը: Ըստ Մ. Խորենացու 139թ. երկրաշարժի ժամանակ մեծ Մասիսի վրա առաջացավ մի փլվածք, որը ժողովուրդը հետագայում կոչեց «Վիմ Մասեաց», «Վիհք Մասեաց», որը նշանակում է Մասիսի խորխորատ կամ անդունդ: Այն գագաթից մինչև ստորոտ ունի 10 կմ երկարություն և 1000 մ խորություն: Այստեղ է գտնվել պատմական Ակոռի գյուղը և Ս. Հակոբի վանքը, որոնք կործանվել են 1840թ. հունիսի 20-ի երեկոյան տեղի ունեցած ավերիչ երկրաշարժի ժամանակ, երբ միաժամանակ ժայթքել է Մասիսը: Այդ նույն երկրաշարժի ժամանակ կործանվել է նաև Երևանի սարդար Հուսեին խանի պալատական ամառանոցը, Ս. Հակոբի վանքը և վիհի եզրին գտնվող համանուն աղբյուրը:

Արարատ անունով լեռ կա Ավստրալիայի հարավարևմտյան Վիկտորիա նահանգում (բարձր.՝ 660 մ., Արարատ քաղաքից 8 կմ հարավ-արևելք): Այն այդպես են կոչել եվրոպացիները 18-րդ դ. 80-ական թվականներին, քանի որ այն նմանեցրել են բիբլիական Արարատին: Արարատ անունով մեկական քաղաքներ կան նաև ԱՄՆ-ի՝ Վերջինիա, Ալաբամա և Փենսիլվանիա նահանգներում:

ԱՆՎԱՆ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՌԱՋԻՆ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Արարատ» կամ «Մասիս» անվանումը տարբեր ժողովուրդների մոտ հիշատակվում է տարբեր ձևով: Հայերն այն անվանում են Մասիս կամ Արարատ, հին շումերներն այն կոչել են Նիցիր, ասորեստանցիները՝ Արարդու, հրեաները՝ Արարատ, պարսիկները՝ Կուհի նուհ (Նոյի սար), թուրքերն այն անվանում են Աղրիդաղ (Ծանր լեռ), արաբները՝ Հարիս (Սիսը՝ Հուայրաս), իսկ հունահռոմեական աղբյուրները՝ Մասիուս կամ Մասիոն: Հայոց մեջ Մասիս անունը ավանդաբար գործածվել է «Ազատ» (սրբազան, պաշտելի, ազնվական), «Մեծ», «Բարձր», «Մթամած», երբեմն՝ «Սպիտակափառ», «Արեգնաճեմ», «Երկնաճեմ» մակդիրներով:

Ամենայն հավանականության լեռն առաջին անգամ հիշատակվում է Ք.ա. 3-րդ հազ.-ում գրված մարդկության պատմության առաջին էպոսում՝ շումերական «Գիլգամեշ»-ում, որտեղ նշվում է, որ էպոսի հերոսներից մեկը՝ Էնկիդուն, հավերժական ծաղիկը փնտրելու նպատակով Շումերից ուղևորվում է դեպի հյուսիս՝ դեպի Արատտա երկիր, որտեղ գտնվում էր Նիցիր՝ «աստվածների ժողովի» սարը:

Մասիս անվանումը ունի մի քանի բացատրություն.

ա) Այն առաջացել է Առաջավոր Ասիայում մեծ տարածում գտած Մա աստվածուհու անունից, որն ըստ հնագույն կրոնական պատկերացումների, բնակվում էր բարձր լեռների՝ Սիսերի գագաթներին: Այստեղից էլ առաջացել է Մայի սար (Մայի սիս) անվանումը, որի գագաթին բնակվել է Մա աստվածուհին (նույն համանմանությամբ «Ջոմոլունգմա» նշանակում է լեռների մայր աստված):

բ) Ըստ պատմահայր Մ. Խորենացու, «Մասիս» անվանումն առաջացել է Հայկ նահապետի սերնդակից Գեղամ նահապետի հոր՝ Ամասիա նահապետի անունից, որը բնակվում էր Մասիս լեռան դիմաց գտնվող Արմավիր քաղաքում:

գ) Ըստ ներմուծված մի ավանդության, որը մեզ է հաղորդում Անանուն պատմիչը, Մասիս անվանումը ծագել է աստվածաշնչյան Մասեկի անունից (որը միջնադարյան գրիչները աղճատելով դարձրել են «Մարսեակ»), որը եղել է հրեաների առաջնորդ Աբրահամի հարճերից մեկը: Աբրահամն իր հարազատ որդուն՝ Իսահակին, իր

հարճերից ծնված որդիներից բաժանելու համար, հարճերին՝ նրանցից ծնված զավակի հետ միասին, ուղարկում է տարբեր ուղղություններով: Նա Մասեկին և նրանից ծնված որդուն՝ Եղիազարին ուղարկում է «յԵրկիրն Արևելից»՝ Հայաստան: Ըստ Աստվածաշնչյան տեղեկության, Մասեկի անունից առաջացել է Մասիս անվանումը, իսկ Եղիազարի անունից՝ «Եղևնո» կամ «յԱզատն Մասիս» անվանումը: Անանուն պատմիչը նույնացրել է Եղիազարի և Մ.Խորենացու մոտ հիշատակվող Ամասիայի որդի՝ Փառոխի անունները:

Արարատ անվանումն «Արարդու» ձևով առաջին անգամ հիշատակվում է Ք.ա. 714թ. Ասորեստանի Սարգոն 2-րդ թագավորի մի արձանագրության մեջ:

Արարատ անվանումն իր ուղիղ՝ Արարատ ձևով առաջին անգամ հիշատակվում է Աստվածաշնչի Հին Կտակարանի Գիրք ծննդոց գլխում՝ կապված համաշխարհային ջրհեղեղի և Նոյան տապանի հետ:

Ըստ մի ստուգաբանության Արարատ անունն առաջացել է նախաքրիստոնեական Ար-Արև աստծու անունից և բառացիորեն նշանակում է աստծու կողմից արարված (Ար+ար) երկրի լեռ:

Ըստ մեկ այլ բացատրության, այն նշանակում է Արայի (խոսքը վերաբերում է Արա Գեղեցիկին) կործանում:

Հետագայում Արարատ անվանումը ենթարկվել է զանազան անվանափոխությունների՝ **Արայի լեռ, Արայի արատ, Հուր արտա, Հարա-հարա (Լերինք-լերանց), Արիա-վարդա (Արեաց երկիր)** և այլն: Օտար մատենագիրներն այն կոչել են **«Արարատի լեռներ», «Արարատյան աշխարհի լեռներ», «Հայոց լեռներ»:**

ԱՐԱՐԱՏ ԼԵՌԸ ԵՎ ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ

Աստվածաշնչում Արարատը, որը Ք.ա. 1-ին դ. Հին Ուխտի քրիստոնյան միաբանները նույնացրել են Մասիսի հետ, ներկայացված է իբրև տապանի լեռ, համաշխարհային ջրհեղեղից փրկված Նոյ նահապետի նավակայանը, «նոր մարդկության խանձարուրը, ազգերի ու ժողովուրդների սփռման արձակարանը»: Այդ պատճառով Արարատը ճանաչված է նաև «Նոյան լեռ» անունով: Այս հարցում հայ մատենագիրների մոտեցումները տարբեր են: Փ. Բուզանդը «Արարատ» անունով լեռ ասելով նկատի է ունեցել Կորդուքի Արարադը (Ջուդի դաղ), իսկ Մ. Խորենացին՝ Արարատյան դաշտի հարավում տեղակայված լեռը: Այդ մասին նա գրում է. «Իսկ հարավային արեգակնասլաց լեռը, սպիտակափառ գագաթով, ուղիղ բուսել է երկրից՝ պինդ գոտեվորված մարդու երեքօրյա ճանապարհի շրջապատով, ինչպես ասաց մերոնցից մեկը, և հետզհետե սրվում է դեպի վեր, իսկապես մի ծերունի լեռ երիտասարդացած լեռների մեջ»: Այդուհանդերձ ջրհեղեղի պատմականությունն ընդունող որոշ գիտնականներ (Ռումեր, Հոֆ, Ռիտեր, Ալիշան և ուրիշներ) նույնիսկ նկատել են Արարատ-Մասիսի այնպիսի յուրահատկություններ (գլխավորապես Հին աշխարհում գրված կենտրոնական դիրքը և այլն), որոնց պատճառով այն իրոք կարող էր արժանանալ «նախաջրհեղեղյան աշխարհի մահարձանի և նոր մարդկության օրրանի» պատվին:

Մինչև 19-րդ դ. 60-ական թվականները Աստվածաշունչը միակ սկզբնաղբյուրն էր համաշխարհային ջրհեղեղի պատմության վերաբերյալ: Սակայն 19-րդ դ. 60-70-ական թվականներին Միջագետքի տարածքում անգլիայի նշանավոր հնագետ, Լոնդոնի Բրիտանական թանգարանի աշխատակից՝ Ջորջ Սմիթի կողմից Նինվեի պեղումներից հայտնաբերված սեպագիր արձանագրությունների կավե սալիկների ընթերցումից պարզվեց, որ գիտնականը հայտնաբերել էր մարդկության պատմության հնագույն էպոսը՝ «Գիլգամեշ»-ը, որի մեջ տեղեկություններ էին պահպանվել համաշխարհային ջրհեղեղի մասին:

Հայկական ավանդությունը Նոյի անվան հետ է կապում Արարատին մերձավոր մի շարք տեղանուններ՝ Երևան, Ակոռի, Առնոյոտն, Նախճավան, Մարանդ և այլն: Իսկ ջրհեղեղի հիշատակը, ըստ հին հայկական հավատալիքների, տոնել են Նպատ=Նոյապատ լեռան ստորոտին:

Ջրհեղեղի ավանդազրույցը տեղ է գտել համաշխարհային արվեստում: Այդ թեմայով արվեստի կոթողներ են ստեղծել Ուչչելլը, Միքելանջելոն, Լեոնարդո Դավինչին, Թյուռները, Այվազովսկին և ուրիշներ:

Մասիսն աշխարհի ամենագեղեցիկ լեռներից մեկն է, և այդ գեղեցկությունը պայմանավորված է նրանով, որ նա դիտողի աչքի առջև վեր է խոյանում իր ողջ վեհությամբ: Ֆրանսիացի նշանավոր աշխարհագետ Է. Ռեկլյուն անդրադառնալով Մասիսի գեղեցկությանը, նշում է, որ «այս սարը Հին աշխարհի միջով Բարեհուսո հրվանդանից մինչև Բերինգյան նեղուց ձգված բարձր երկրների և բարձրավանդակների կենտրոնական գագաթն է»:

Միաժամանակ ***Մասիսն աշխարհի սրբազնագույն լեռներից մեկն է:*** 13-րդ դ. ֆրանսիացի ճանապարհորդ Ռուբրուկը վկայում է, որ հայերն Արարատի վրա չեն բարձրանում ոչ այնքան լեռան դժվարամատչելիության, որքան նրա սրբազանությունը չպղծելու պատճառով: Մի հայ ծերունի Ռուբրուկին պատմել է, որ «ոչ ոք չպետք է բարձրանա Մասիսը, նա աշխարհի մայրն է»:

Իր գեղատեսիլությամբ, դժվարամատույց բարձրությամբ, բնական ներգործումներով (երկրաշարժեր, սառցասահումներ, վիմագլորումներ, սարսափազդու դղրդյուններ և այլն) Արարատը հնում խորհրդավոր ազդեցություն է ունեցել հայերի վրա, արժանացել պաշտամունքի և առասպելաբանության: Հայոց հին հավատքում Մասիսը քաջաց ոգիների դիցարանն էր, որոնք այն հսկել են մարդկանց ներխուժումներից և անդնդակուլ արել հանդուգն սահմանախախտներին: Ըստ «Արտավազդ» ժողովրդական հնագույն զրույցի, Արտավազդը շղթայակապված է Մասիսի վիհում և ջանում է դուրս գալ այնտեղից: Քրիստոնեության դարձից հետո հայ եկեղեցին Արարատի սրբազանությանը նոր մեկնաբանություն տվեց, իսկ հեթանոսական ավանդության քաջաց ոգիները փոխարինվեց Նոյի սրբազան տապանի պահապան հրեշտակներով:

Պատմաաշխարհագրական առումով Մասիսի հյուսիս-արևելյան փեշերին փռված տարածքը կոչվել է Մասյացոտն (Ոտն Մասյաց), իսկ հեթանոսական տոմարի ամիսների 18-րդ օրը կոչվել է Մասիս:

ԱՌԱՋԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐԱՐԱՏ ԼԵՌԱՆ ՎՐԱ

Մասիսի գիտական ուսումնասիրությունը սկսվել է դեռևս վաղ ժամանակներից: Ըստ Ագաթանգեղոսի, Հայոց թագավոր Տրդատ Գ Մեծը Հռիփսիմեի վկայարանը կառուցեց սրբազան Մասիսից բերած քարերով:

Փավստոս Բուզանդը պատմում է, որ եպիսկոպոս Հակոբ Մծբնեցին (4-րդ դ.), Նոյի տապանը տեսնելու հույսով, մի խումբ մարդկանց հետ փորձեց հյուսիս-արևելյան լանջով բարձրանալ Արարատի գագաթը: Աստված տեսնելով նրանց ապարդյուն ջանքերը և անսալով Հակոբի պաղատանքին, հրեշատակի միջոցով սուրբ տապանի փայտերից մի կտոր ուղարկեց նրան և հասկացրեց Արարատի կատարի անմատչելիությունը մահկանացուների համար: Հակոբ Մծբնեցու բերած փայտի այդ կտորն, իբրև սրբազան մասունք, այսօր պահվում է Էջմիածնի Մայր տաճարի թանգարանում:

Արարատի գիտական նվաճման պատմության մեջ լուրջ քայլ կատարեց ֆրանսիացի բնախույզ Պիտտոն դե Տուրնեֆորը: Բացառիկ բույսեր փնտրելու և լեռնային բուսականության բնականոն դասավորությունը ուսումնասիրելու մտադրությամբ, Տուրնեֆորը 1701-ի օգոստոսին հասավ հավերժական ձյան սահմանը, նկարագրեց լեռան ֆիզիկական յուրահատկությունը և բուսական աշխարհը:

1720թ. Արարատ է գալիս Պետրոս Մեծի արշավախումբը՝ տապանը գտնելու նպատակով, սակայն ոչինչ չեն հայտնաբերում:

1735-1736թթ. Նադիր շահը 100 հոգուց բաղկացած արշավախումբ է ուղարկում Արարատ, բայց դարձյալ ոչինչ չհայտնաբերելով, ձեռնունայն հետ են վերադառնում:

Սիմոն Երևանցի կաթողիկոսը հայ-ռուսական հարաբերություններն ամրապնդելու ակնկալիքով այլ նվերների շարքում Ռուսաստանի ռուս Մեֆոդի եպիսկոպոսին է ուղարկում Էջմիածնում պահվող Նոյան տապանի մի կտոր:

Պաշտոնապես առաջին անգամ՝ 1829թ. սեպտեմբերին, Արարատի գագաթը բարձրացավ Դորպատի համալսարանի պորֆեսոր Ֆրիդրիխ Պարրոտը, քանի որ մինչ այդ սրբապղծություն էր համարվում Մասիսի վրա բարձրանալը: Նրան ուղեկցում էին Խաչատուր Աբովյանը, ակոռեցի երկու գյուղացիներ և երկու ռուս զինվորներ: Մասիսի

վրա նա կատարեց ֆիզիկական և բուսա-կլիմայական ուսումնասիրություններ: Ֆ. Պարրոտը Ակոռիում գտավ 319թ. երկրաշարժի ժամանակ տապանից պոկված խաչի մի կտոր:

1846թ. Մասիսի գագաթ բարձրացավ անգլիացի ճանապարհորդ Հ. Դ. Սեյմուրը, որին դարձյալ ուղեկցում էր Խ. Աբովյանը: 1850-ի օգոստոսին Աբիխի նշած ճանապարհով Արարատի գագաթը բարձրացավ ռուսական գնդապետ Յ. Ի. Խոձկոյի արշավախումբը, որը մեկ շաբաթ մնաց գագաթին, կատարեց մթնոլորտային չափումներ, բուսագոտիական ուսումնասիրություններ և այլն: Յ. Խոձկոն և արշավախմբի անդամները վկայում են, որ վաղ առավոտյան Արարատի կատարից տեսանելի էին Գեղամա, Տավրոսի, Կորդուքի, Բարձր Հայքի լեռները, Մեծ Կովկասի լեռնաշղթան՝ Էլբրուսը, Կազբեկը և այլն:

1860-ական թթ. Լոնդոնի լեռնագնացների ակումբի անդամները մի քանի անգամ բարձրացան Արարատի գագաթը՝ դյուրացնելով հետագա արշավախմբի գործը: Այնուհետև տասնյակ արշավախմբեր բարձրացել են Արարատի գագաթը, կատարել տարբեր բնույթի ուսումնասիրություններ:

Հայտնի է, որ Ռուսաստանի ցար Նիկոլայ 2-րդ-ի աղջիկը՝ Անաստասիան, տեսել է Նոյան տապանի լուսանկարները և կրել է տապանի մի կտորից պատրաստված փայտե խաչ:

1945թ. Մասիսի գագաթ բարձրացավ ամերիկյան արշավախումբը՝ Ֆերդինանդ Նավարայի գլխավորությամբ: Իսկ 1969թ. հուլիսի 15 - օգոստոսի 2-ը Մասիսի գագաթ բարձրացավ ամերիկյան մեկ այլ արշավախումբ (6 հոգի), Հարի Քրաֆորդի գլխավորությամբ, որը միաժամանակ որոշեց տապանի տեղը:

1989թ. սեպտեմբերին Արարատ լեռան գագաթ ուղևորված ամերիկյան գիտարշավի անդամները, իրենց կարծիքով, հայտնաբերել են Նոյան տապանը: Կոլորադո-Սպրինգսում (Կոլորադո նահանգ) տեղի ունեցած մամուլի ասուլիսում այդ մասին հաղորդեց գիտարշավը գլխավորած ամերիկացի հայտնի աստղանավորդ, «Ապոլլոն-15ե տիեզերանավով դեպի Լուսին կատարված թռիչքի մասնակից Ջիմ Իրվինը: Նրա վկայությամբ, Թուրքիայում այդ ամառը ամենաշոգն էր վերջին 50 տարիների ընթացքում, որի հետևանքով Արարատի գագաթի սառցակեղևի մի մասը հալվել էր և հավերժական սառածությունից հետո բացվել էին բազմաթիվ քարանձավների

մուտքերը: Դրանցից մեկում արշավի մասնակիցները հայտնաբերեցին մի արտասովոր դարչնագույն առարկա, որը մեծ արկղ էր հիշեցնում: Գիտարշավի մասնակիցներն այն նկարահանեցին տեսաժապավենի վրա: Որոշվեց ուղղաթիռով այնտեղ ուղարկել մի խումբ ամերիկյան հնագետների, որպեսզի որոշեն այդ արտասովոր առարկայի տարիքը: Սակայն թուրքական իշխանությունները նրանց մերժեցին և արգելեցին այդ առաքելությունը:

ԱՐԱՐԱՏ ԼԵՌԸ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ՄԵՋ

Արարատը ներշնչանքի աղբյուր է եղել հայ և օտարազգի արվեստագետների համար: Տարբեր ժամանակներում Արարատի մասին առասպելաբանել են, ձոնել երգեր, բանաստեղծություններ և ստեղծել կտավներ: Այն համարել են վեհության, մեծության, ահեղության, գեղեցկության խորհրդանիշ:

Հայ պատմիչներից և գրողներից Արարատը գովերգել և նրան ոգեշունչ տողեր են նվիրել Փ. Բուզանդը, Մ. Խորենացին, Գր. Նարեկացին, Խ. Աբովյանը, Ղ. Ալիշանը, Ռաֆֆին, Ավ. Իսահակյանը, Վ. Տերյանը, Ե. Չարենցը, Հ. Շիրազը, Պ. Սևակը և ուրիշներ: Գրիգոր Նարեկացին Արարատն անվանել է «մեծության կշռորդ», իսկ Թ. Արծրունին՝ «մեծավայելուչ թագավոր»: Արարատի վեհանիստ գեղեցկությունն իրենց կտավներում պատկերել են հայ նկարիչներ՝ Հ. Այվազովսկին, Գ. Բաշինջաղյանը, Հ. Մահտեսյանը, Վ. Ախիկյանը, Մ. Սարյանը, Փ. Թերլեմեզյանը, Ե. Թադևոսյանը, Ս. Աղաջանյանը, Հ. Հակոբյանը, Հ. Զարդարյանը և ուրիշներ: Արարատը միակ լեռն է, որն ունի իր «դեմքը և որին նայելով հայ ժողովուրդը տեսել է և տեսնում է իր արտացոլանքը: Որպես հայ ժողովրդի վերածնված պետականության և հույսերի խորհրդանշան, Արարատը պատկերված էր Խորհրդային Հայաստանի, իսկ այսօր՝ Հայաստանի 3-րդ Հանրապետության զինանշանի վրա:

Հրեաների «երկրորդ ավետյաց երկրում»՝ Ամերիկայում, հրեա Մանուել Մորդահեյը (Մարթքե), 1840թ. առաջարկել էր նոր Իսրայել կառուցել Նյու-Յորքի նահանգի Նիագարա գետի մի կղզու վրա: Եվ չգիտես ինչու այդ տեղանքը պիտի անվանվեր Արարատ՝ որպես նոր Իսրայելի փրկության տապան-հանգրվան:

Արարատը Ք. Քըրքորյանին պատկանող ամերիկյան Սենթրալ փարթներշիս կինոստուդիայի առևտրական լոգինն էր:

Մասիսին մոտիկ

Դու այսօր այնքան մաքո՛ւր ես, Մասի՛ս,
Գույներդ այնպես ջի՛նջ են, նրբերա՛նգ,
Ասես չես նյութված քար ու ավազից,
Այլ ջրաներկով գծված ես բարակ:

Այնպես խաղաղ ես աշխարհին նայում,
Եվ այնպես մե՛րն ես, մոտի՛կ, մտերի՛մ,
Ասես չեն բերել քեզ դավ ու արյուն,
Քեզ չեն բաժանել քո որդիներից:

Ասես Արաքսը՝ զայրույթից գունատ,
Իմ ու քո միջև չի սառել այսպես,
Ու թե այս ճամփով մի քի՛չ էլ գնամ,
Մի քի՛չ էլ քայլեմ՝ հասնելու եմ քե՛զ...

ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ

Հ. *Շիրազի սիրտը թաղված է Արարատի հավերժական սառույցների տակ*

Արարատին

Իմ Արարատ սուրբ սարը վեհ
Մեր նախահայր Հայկն է կարծես,
Որ թիկնել է ամպ ու շանթին,
Ու ծխում է հանց նահապետ՝
Խաղաղության չիբուխն իր հին
Ու ամպն է ծուխ չիբխի գլխին։

Ծխում է նա ու բարձունքեն
Աչք է պահում իր թոռներին,
Դարեր հսկում, որ չցրվեն
Ու կուլ չերթան աշխարհներին։
Ու հսկում է նրանց ճամփան
Օրորոցից մինչ գերեզման։

Խաղաղ է նա, տեսնում է, թե
Ոնց են ելնում օրորոցից
Թուխ, քաջորակ թոռներն իր վեհ
Ու չարը դուրս վանում երկրից,
Դաշտ են ձգում խոփն արծաթե
Ու ոսկի հաց պոկում քարից։

Ու ժպտում է հոր պես հպարտ,
Թիկնած հնուց մեր երկրին.
Մեր նահապետ լեռն Արարատ
Լուռ ծխում է խաղաղության,
Իմաստության չիբուխն իր հին։

Ու ժամանակն է ծուխը չիբխին…

ԿՏԱԿ

Որդիս, քեզ ի՞նչ կտակեմ, ի՞նչ կտակեմ, իմ բալիկ,
Որ ինձ հիշես վշտի մեջ, թե խինդի մեջ քո գալիք.
Գանձեր չունեմ, բայց գանձն ի՞նչ, գանձը լույսն էր աչքերիս,
Դու ես միակ իմ գանձը, դու ես գանձը գանձերիս:

Քեզ այնպիսի գանձ կուզեմ ես կտակել հայրաբար,
Որ չի կարող կտակել ուրիշ երկրում ոչ մի հայր, –
Ես քեզ այն եմ կտակում, որին այս մեծ մեր դարում
Փոքրիկ մարդիկ են բանտել ու շղթայել ամպերում:

Քեզ մեր սարն եմ կտակում, որ դուրս բերես սև ամպից,
Որ տուն բերես շալակած արդարությամբ մեր անբիծ,
ՈՒ կբերես, իմ բալիկ, թեկուզ քո խեղճ թաթիկով
Մեր սարն այս կողմ շուռ կտաս՝ արդարությանդ ուժն է ծով:

Ու երբ բերես, իմ բալիկ, սիրտս էլ շիրմից կհանես,
Կբարձրանաս ու սիրտս ազատն ի վեր կտանես
Ու կթաղես իմ սիրտը ձյունների տակ Մասիսի,
Որ շիրմում էլ՝ դարավոր հուր կարոտից չմրսի:

Քեզ Մասիսն եմ կտակում, որ դու պահես հավիտյան,
Որպես լեզուն մեր հայոց, որպես սյունը քո հոր տան:

****

Երբ օրոցքում աչքս բացի՝ Մասիս սարերն հեռվում տեսա,
Գերված տեսա ու ես լացի, հայոց ցավերն հեռվում տեսա,
Ա՛խ, ես մանկուց երազեցի սուրալ ազատ Մասիսն ի վեր,
Հովտում այրվել սիրտս բացի, բայց հով սարերն հեռվում տեսա…

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶ

Արարատին

Արարատի ծեր կատարին
Դար է եկել, վայրկյանի պես ,
Ու անցել:

Անհուն թվով կայծակների
Սուրն է բեկվել աղամանդին,
Ու անցել:

Մահախուճապ սերունդների
Աչքն է դիպել լույս գագաթին,
Ու անցել:

Հերթը մի պահ քոնն է հիմա .
Դո՛ւ էլ նայիր սեգ ճակատին,
Ու անցի՛ր…



Ավետիք Իսահակյան

Արարատը կտավներում

Փանոս Թերլեմեզյան, Արարատը (1917)

Գևորգ Բաշինջաղյան, Արարատը լուսաբացին (1914)

Մարտիրոս Սարյան, Արարատը գարնանը (1945)



Հովհաննես Այվազովսկի, Արարատ լեռան դաշտավայրը, 1882

Եղիշե Թադևոսյան, Արարատը Էջմիածնից, 1895

Հովհաննես Այվազովսկի, Նոյն իջնում է Արարատից (1889)

Արարատը միակ լեռն է, որն ունի իր «դեմքը» և որին նայելով հայ ժողովուրդը տեսել է և տեսնում է իր արտացոլանքը: Որպես հայ ժողովրդի վերածնված պետականության և հույսերի խորհրդանշան, Արարատը պատկերված էր Հայաստանի առաջին Հանրապետության, Խորհրդային Հայաստանի, իսկ այսօր՝ Հայաստանի 3-րդ Հանրապետության զինանշանի վրա:



Օգտագործված գրականության ցանկ

1. https://hy.wikipedia.org/wiki/Արարատ/հասանելի է 06/10/23//
2. https://armeniadiscovery.com/hy/ articles/the-ararat-mountain /հասանելի է 18/10/23//
3. https://armland.am/hy/2020/03/23/հասանելի է 30/10/23//
4. https://patmakanhetq.com/photoinfo/ararat_ler//հասանելի է 02/11/23/